

ԱՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ*Բանասիրական գիտությունների թեկնածու***ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՏՈՒ ՖՐԱՆՍԻՆ**

Հայ ժողովրդի սակավաթիվ անձնվեր ու անկեղծ բարեկամների շարքում իր պարզավոր փնդն ունի Ֆրանսիայի ակադավոր զավակ, գրող, հասարակական-քաղաքական գործիչ, Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Անատոլ Ֆրանսը (1844-1924):

Նրա հայասիրական գործունեությունն սկսվել է 19-րդ դարի 90-ական թվականներից և ավելի քան երեք տասնամյակ, մինչև կյանքի վերջը, նա եռանդով, անձանձիր ծառայեց հայ ժողովրդի դարի արդարացի լուծմանը:

Ամենայն հայոց Գևորգ Ե Կաթողիկոսը հայ ժողովրդի երախտագիտությունը մեծանուն հայասերի հանդեպ արտահայտել է 7 հունիսի 1917 թ. N 1018 հայրուկ կոնդակով: Կոնդակը Պողոս Նուբարի միջոցով հանձնվել է Ա. Ֆրանսին 1919 թ. մարտին, երբ արդեն հայ ժողովուրդը ծանրագույն պայմաններում իր անկախ պետականությունն էր կերպում:

Հայ ժողովրդի մեծ բարեկամը, ի պարասխան իրեն շնորհված կոնդակի, Գևորգ Ե Կաթողիկոսին է հղում մի նամակ, որն այսօր էլ չի կորցրել իր խորհուրդը:

Թեև ժամանակին կատարված այս երկու նամակների հայերեն թարգմանությունը փնդ-փնդ շատ բառացի և անհարթ է, սակայն քանի որ նրանք ևս մի բնագիր և վավերագիր են դարձել, ուստի բերում ենք անփոփոխ:

Սպորն ներկայացնում ենք N 1018 կոնդակը, Ա. Ֆրանսի ինքնագիր նամակը՝ հայերեն թարգմանությամբ հանդերձ, և Պողոս Նուբարին ուղղված շնորհակալական նամակի հայերեն թարգմանությունը: Վավերագրերը պահվում են ՀՀ ՊԱ, ֆոնդ 57, ցուցակ 5, գ. 170:

**Հայոց Ազգային Պարուիրականության նախագահ
Պողոս Նուբար Փաշային**

Ավանաուր և սիրելի բարեկամ,

Կատարելապես շնորհապարտ եմ Ձեզ՝ Ն. Սրբութեան, Գևորգ Ե-ի Կոնդակը ինձ հասցնելու համար, որ մեծագույն պարսին է ինձ համար: Խնդրում եմ հասցնել Նորին Սրբութեան իմ յարգալից պարասխանը, որ լաւագոյն ընդունելութիւն կը գտնէ, հաւասարի եմ, եթէ Ձեր կողմից ներկայացնուի:

Ձեզ հետ միասին ես ևս հաւասարի եմ ջերմապես որ խաղաղութեան Կաճառը կեանք պիտի շնորհէ վերածելով նորան ազատ և անկախ Պետութեան:

Հաւարացեք, թանգագին և ականատր բարեկամ իմ ամենաանկեղծ զգացմունքս որ ունեմ դէպի ձեր դարը և ամենաջերմ յարգանքս որ ունեմ անձնապէս առ Ձեզ:

Սյորագրած՝ Անարօլ Ֆրանս

Սէն-Սիր

Լուարի վերայ

մարտ 29, 1919.

ՏՏ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թ. 7-ի շրջ.: Թարգմ. ֆրանսերենից: Ձեռագիր:

**Նորին Սրբութեան Գեորգ Ած Քահանայապետի և Կաթողիկոսի
Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի Արարապետան Ազգային
Աթոռոյ՝ Հայ Առաքելական Եկեղեցւոյ**

Մեծ Քահանայապետ և ծայրագոյն Պատրիարք,

Այն Կոնդակը, որ Ձերդ Սրբութիւնը պարիւ էր արել ուղղելու ինձ՝ լցրեց իմ սիրտն ուրախութեամբ և հրճուանօք: Նա՛ այս Կոնդակը, իմ սրտիցս էր խօսում. նա զգում էր, որ մի մեծ նախանձախնդրութիւն էր ոգևորում ինձ մարտիրոսացած Հայաստանի սրբազան խնդրի պատճառով և նա հաճել էր տալ ինձ ի տրիպուր իւր բարձր հաւանութիւնը այն կոչին, որ բարձրացրեց Ֆրանսիայում շար-շարերի մէջ և մի թոյլ ձայն, այն ահեղի ոճրագործութեան դէմ, որ կրկնուել էր բազմիցս և որ աւելի քան մի միլիոն ժողովրդի կորստեան պատճառ դարձաւ:

Վերջապէս, այսքան տարիների վիշտ ու արցունքներից յետոյ, որ ահա ծագում է փրկութեան օրը, ահա իրականանում են ազատագրութեան և անկախութեան այն իղձերը, որ պահպանեցին մեծ փորձութեան շրջանում, այն մեծ ազգը, որի հոգևոր Հայրն էք Դուք. ահա Հայ ժողովուրդը վերջապէս պէտք է հաստատուի ինքնիշխանաբար այն հողի վերայ, որը փառաւորեցին իրենց հանճարով և որ ոռոգեց իւր հերոսական արիւնով:

Թոյլ տուէք ինձ, Մեծ Քահանայապետ, հոգով հրճուել այս առթիւ Ձերդ Սրբութեան հետ և մինչև իւր Գահոյքն հասցնել իմ երախտագիտութիւնս, մեծարանացս և ազատ Հայաստանի նկատմամբ ունեցած ըղձերիս հետ:

Անարօլ Ֆրանս

Սէն-Սիր

Լուարի վերայ

29 մարտ 1919

ՏՏ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 170, թ. 7 և շրջ.: Թարգմ. ֆրանսերենից: Ձեռագիր:

ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՆԱՏՈՒ ՖՐԱՆՍԻՆ

Գեորգ Ժառայ Յիսուսի Քրիստոսի ...

Պատուական կաճառորդի ճեմարանին Գաղղիական, որ ի Փարեզ, մեծարգոյ Անապո-լայ Ֆրանս, ողջոյն ի Հայրապետական Աթոռոյս Ս. Էջմիածնի և ի մէջ առաքաղանայ՝ խնդալ ի Տէր.

Ծանեաք--զՁեզ, Սրտիդ Մուգայից և Ջերթողդ մեծի ազգինն Գաղղիական, զի զանակզբնական զԲանն ի Ձեզ մարմնաւորեալ, հնչմամբ քնարին ձօնելոյ յերկնուստ՝ հուր ի սիրոյս մարդկան արծիւ մաքուր, առ ի լինել նոցա սիրոյս փոլնջեան, և արագաթոյիցս միօք, իբրև զարծուիս ճեմել ազապս ի վերայ երկրի, վայելեալ զբարիս Ամենակալին:

Զյարագուարճ Սէր ազապութեան ոգոյ Ձերոյ ի գիրս երկանց Ձերոց և յարդիւնս վաս-տակոց Ձերոց ի հրապարակի մրցութեան ազանց համայնից, իբրև զի բոյր անուշահօտ ծաղկանց հօտաբեցաք, և քմացս և մրացս ճաշակաց ծաղկանց գրեալ ախորժ, ըղծիւք լցաք խոտաբանիլ զմեծութիւն ոգոյ և հանճարոյ Ձերոյ, ոգոյ զփութեան և իմաստու-թեան արունսրի, առաջի ամենեցունց, որոց արժէք ի սպաս որդոց մարդկան, որ ի սփիւռս աշխարհի, ի գեղեցկէն յաշխարհաց ի Գաղղիոյ ցեղաւոր ծագս երկրի, յօրեալ զամենե-սեան զօրիւք ազապութեան, եղբայրութեան, սիրոյ և հաւասարութեան ազգաց ի հանրա-կան կեանս իրեանց, զոր և ուսաք մեք ամենեցեան ընդ Ձեզ և ընկալաք իբրև զաւանդ աւ-երկբայ ի Տեառնէ Քրիստոս:

Ծանեաք զՁեզ, յաշորդ և պահապանդ արթուն՝ մաքուր աւանդից և խոհից Պրեսանսեայ և այլոց մեծաց որդոց մեծի Հայրենեագէտ, զոգի որոց և Ձեր իբրև զփայլակն ծագեալ զերկնի և փարածեալ զլոյս զրիչ ճառագայթից իրեանց ցլերենս Այրարապայ, ոչ անխայն-ցեք ջանս առ ի դնել տպելանիս ի վերայ վիրաց՝ յաւորս փառապանաց մերոց, գրով և բա-նիլ յարդարեցեք զճանապարհս արդար հապտոմանց Հայոցս զկնի աշխարհաստանս պա-տերազմիս այսորիկ, զի եղիցի մեզ և համայն որդոց մերոց Հայկազնեայց ի սահմանս Հայ-րենեաց մերոց փրկութիւն ի փառապանաց, անդորոթիւն ի հալածանաց և ազապութիւն ի լծոյ ծառայութեանց, զի և մենք և համայն որդիք մեր, զձեռս ի գործ արկցուք, առ ի շինել զաշխարհս մեր աւերած և լեցցուք ի նմին խաղաղութեամբ ընդ ամենայն ազինս՝ յազապու-թիւն, յեղբայրութիւն և ի հաւասարութիւն, յորմէ հետք մեք և վերելք մեր առ գեղս Բաբելաց-ւոց առցուք զսաղմոսս հեծութեանց մերոց և երգեսցուք ընդ Ձեզ և ընդ բարեկամս ազգին ի-մոյ զօրհնութիւն Տեառն:

Առ այս ամենայն ըղծիւք և բաղձանօք առաքեալք առ Ձեզ զգոհութիւնս բազումս ի քրի-ստոյ առաքալանորի երախտեաց Ձերոց ի մեծի ազինն Ֆրանսիոյ առ ամենայն ազգս Հայոց և մաղթեմք առ Ամենակալն Աստուած, զի կեցջիք և աջօք իսկ ձերովք փեսջիք զփրկութիւն Հայրենեաց ձերոց պաշտելոյ և ամենայն ազգաց, որ ընդ Ձեզ, սասանելոց ի բռնութիւնէ թշնամեաց:

Եղիցի ձեռն Ամենակալին յօգնականութիւն Դաշնակից Պետութեանց Գաղղիոյ և զօրավիզն զէնու զօրութեան ևոցա:

Օրինեալք ի Տեառնէ և եղիցի խաղաղութիւն ընդ Ձեզ: Ողջոյն Յիսուսաւանդ և օրինութիւն Մեր ի գլուխ Ձեր: Ամէն:

ՆՆ ՊԿՊԱ, Ժ. 57, ց. 5, գ. 170, թ. 2 և շրջ.: Ձեռագիր: Պատրճեն: